ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

«10» հուլիսի 2018 թվականի №. 88-Ա

## «ԱՆԳԵԼԻՆԱ ԴԱՅՄՈՆԴ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված «Իրավաբանական անձի լուծարման մասին» 2018 թվականի հունիսի 20-ի տեղեկանքն առ այն, որ «Անգելինա Դայմոնդ» ՍՊԸ-ն լուծարված է 2018 թվականի հունիսի 19-ից, ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել «Անգելինա Դայմոնդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը:
2. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի դեկտեմբերի 8-ի օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/363 թույլտվությունը, լեռնահատկացման ԼՎ-363 ակտը և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-363 պայմանագիրը:
3. Ընդերքի գործակալության պետին՝ ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունիսի 19-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**